—Ցանուն Տ. Գրիգորիս վարդապետի Տ. Ցակոբեան, որով արձակի նա, ըստ խնդրանաց իւրոց, ի վանահայրութենէ վանուցն Տաթեւի և ի փոխանորդութենէ Սիւնեաց վիճակի, և կարգի ի Փոխանորդ Նուխւոյ. թ. 1273։

—Ցանուն Գեր. Փոխ. Թեմակալին Երեւանայ Տ. Ներսէս Արքեպս.ի, որով պատուիրի տանել զհաշիւս վանահայրութեան Տաթեւի և զգործս փոխանորդութեան Սիւնեաց ի Տ. Գրիգորիս վարդապետէ. թ. 1274։

Ցանուն վիճ. կոնսիստորիային Արցախու, որով յայտ արարեալ կարգումն Տ. Գրիգորիս վարդապետի ի Նուխի, և Տ. Սահակ վարդապետի Բաղդասարեան ի վանահայր Ճալէթու՝ ցկախման կենաց իւրոց, որպէս ինքն փափագէր. թ. 1277։

—Ցանուն վիճ. կոնսիստ. Շամախու, որով յայտ արարեալ կարգումն Տ. Թադէոս վարդապետի ի վանահայր վանուցն Տաթեւի և ի փոխանորդութիւն վիճակին Սիւնեաց, արձակելով զնա ի վանահայրութենէ վանուցն Սաղիանու. թ. 1283։

—Ցանուն յիշեալ Կոնսիստ.ի, որով պատուիրեցաւ կարգել զԵփրեմ աբեղայն Աղայեան փակակալ վանուցն Սաղիանու. թ. 1284։

—Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի՝ առաքումն նախահաշուոյ ծախուց Ս. Աթոռոյ, հաստատելոյ վասն յառաջիկայ 1899 ամի. թ. 1305։

—Ցանուն Գեր. Փոխ. Թեմակալին Երեւանայ Տ. Ներսէս արքեպս.ի որով հաստատեցաւ ի տեսուչ Թեմակ. Հոգ. դպրանոցին Երեւանայ պ. բժիշկ Սիմէոն Շահնազարեանց. թ. 1316։

—Ցանուն Կոնսիստ. Արցախու, որով թոյլ տայ թաղել ի գաւթի եկեղեցւոյն Ագուլեաց Շուշի քաղաքի զբազմամեայ հաւատարիմ երեցփոխն նոյն եկեղեցւոյ Միրզաջան Պապուաշխանեանց, որոյ ծախսեալ է ի սեփականութենէ իւրմէ առաւել քան զվեշտասան հազար րուբլիս վասն աստուածահաճոյ գործոց և հաստատութեանց քաղաքին. թ. 1317։

—Օրհնութեան յանուն Պ. Բաղդասարայ Աստուածատրեան Բաղդասարեանց, որով կարգի նա գանձապահ գանձանակի Ս. Տաճարի որ յեկեղեցին Օրհէյ քաղաքի Բեսարաբիոյ. թ. 1321։

—Օրհնութեան յանուն Պ. Սիմէոնի Խաչիկեան Աղաճ.ի, որով կարգի նա գանձապահ գանձանակի Ս. Տաճարի որ յեկեղեցին Բէլց քաղաքի Բեսարաբիոյ. թ. 1323։

—Ցանուն Միքայէլ վարդապետի Դաւթեան Թելաւեցւոյ, որով կարգեցաւ նա յառժամանակեայ վանահայր վանուցն Հաղարծնոյ. թ. 1332։

—Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով յանձն եղև ջանալ ընդ ձեռն պատշաճաւոր իշխանութեան ստանալ զկտակեալն ի հանգուցեալ Կոստանդեայ Վարշամեան գումար յօգուտ Հոգևոր Ճեմարանի Ս. Աթոռոյս. թ. 1334։

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Հոկտ. 5. Սինոդը հրամայեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային, որ Բաթումում շինուելիք նոր եկեղեցու գործը թողնէ անկատար, որովհետև Կովկասի պ. Կառավարչապետը, որին դիմումն էր եղել նոր կառուցանելի եկեղեցւոյ համար ժողովարարութեան թոյլտուութիւն ստանալու, հրամայել է թողնել այդ խնդիրն առանց հետևանքի։

Նոյեմբ. 7. Սրբազան Սինոդը կարգադրեց պատուիրել բոլոր Կոնսիստորիաներին, որպէս զի շուտով մանրամասն տեղեկութիւն տան, նախ՝ թէ որչափ արդիւնք է ստացւում թեմից առաջիկայ տարւոյ համար և թէ ինչպիսի աղբիւրներից է գոյանում. երկրորդ՝ թէ որքա՞ն է Կոնսիստորիաների և Հոգևոր կառավարութեանց մէջ ծառայողների և այն բոլոր պաշտօնեաների թիւը, որոնք ռոճիկ են ստանում վիճակային արդիւնքներից. որպէս զի այդ ներկայացրած հաշիւները աչքի առաջ ունենալ առաջիկայ 1899 թուի նախահաշիւը կազմելու ժամանակ։

Հոկտ. 14. Սինոդը մերժեց Քիշնեւից դիմող խնդրատուների առաջարկը, որոնք

ցանկանում են աթոռապատկան հողի վրայ շինութիւններ կառուցանել և մինչև 15 կամ 19 տարին արդիւնքը վայելելուց կամ չնչին վարձ տալուց յետոյ՝ ամբողջ շինութիւնը յանձնել Մ. Աթոռին: Դորա փոխարէն Սինոդը կարգադրեց՝ թոյլ տալ Քիշնևի կալուածոց կառավարչին կառուցանել ամեն տարի աթոռապատկան հողի վրայ նորանոր շինութիւններ և դորա համար կալուածների արդիւնքներից ծախսել տարին տասն հազար ռուբլի, սկսած 1899 թուից. ուստի և պատուիրեց կալուածոց կառավարչին շուտով պատրաստել շինութեանց յատակագիծը և ծախուց նախահաշիւը և ներկայացնել Սինոդին. իսկ շինութիւնները սկսելուց յետոյ՝ երեք ամիսը մի անգամ մանրամասն հաշիւ ներկայացնել:

Հոկտ. 14. Սինոդը կարգադրեց ուղարկել Բարեշն. Տ. Տիրայր վարդապետին Ղազանչեցւոց եկեղեցւոյ երեցփոխան Մինաս Խունանցի յայտարարութիւնը, որով վերջինս դիմել էր Նորին Վեհափառութեան և բողոքել Ստեփաննոս քհ. Տ. Մկրտչեանի և Մեսրոպ քհ. Այրեսեանի եկեղեցում ցոյց տուած անվայել և գայթակղեցուցիչ վարմունքի դէմ՝ կարգելով նորան քննիչ այդ գործի համար և պատուիրելով, որ շտապէ մանրամասն տեղեկութիւն տալ Սինոդին:

Հոկտ. 19. Սինոդը հրամայեց տալ Գեր. Տ. Անանիա եպիս. Համազասպեանին յանուն Նորին Վեհափառութեան մատուցած խնդրի համաձայն երկու հարիւր ռուբլի՝ ամառը Թիֆլիսում բժշկուելու նպատակով կատարած ծախսերի համար:

Հոկտ. 28. Սինոդը կարգադրեց Եայջի գիւղի բնակիչ քուրդ Օսման Մուսա-օղլույ խնդիրը, Նոր-Բայազիդի գաւառապետի հաղորդագրութեան հետ, որով վերջինս վկայում է Օսմանի ռուսահպատակ չլինելը՝ ուղարկել Կովկասի կ. Կառավարչապետին և խնդրել թոյլտուութիւն նորան իւր խնդրանաց համեմատ ընդունելու Հայոց ս. եկեղեցւոյ գիրկը:

Հոկտ. 28. Սինոդը հրամայեց Ստեփաննոս քհ. Տէր Գալստեանին ենթարկել 25 ռ. տուգանքի՝ Վարժագիւր գիւղում (Շարուրի գաւառ) հինգերորդ աստիճանի խնամութեան չհաս և անհրաման պսակ կատարելուն համար, և պատուիրել Երևանի Կոնսիստորիային զրկել նորան քահանայագործութիւնից եռամեայ ժամանակով:

Հոկտ. 28. Նորին Վեհափառութեան սրբ. կոնդակի հիման վերայ Սինոդը կարգադրեց, որ Բարեշն. Տ. Բաբգէն վարդապետի տեղ նշանակուի գանձապահ Բարեշն. Տ. Եղիշէ արեղայ Ահարօնեան, իսկ առաջինին թոյլ տրուի գնալ Խարկով քաղաքը ռուս լեզուի մէջ կատարելագործուելու համար՝ եռամեայ ժամանակով:

Նոյ. 6. Սինոդը առաջարկեց Ներքին գործոց նախարարին ի հաստատութիւն Աստրախանում հիմնուելիք թեմական դպրանոցի հիմնական կանոնները, որ կազմել է Գեր. Տ. Արիստակէս արքեպս. Սեդրակեան: Նոր դպրանոցը պիտի ունենայ վեց դասարան, ուր պիտի աւանդուին բոլոր այն առարկաները, որոնք աւանդւում են միւս թեմական դպրանոցներում:

## ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի լրոյ անկեալ եմ, եթէ մին ի մերայնոց օրաթերթից Տփղիսու քանիցս հրատարակեալ է, զի իբր այն թէ ի դրամարկղէն որբոց որ ընդ պահպանութեամբ մերով են, վճարին ամսաթոշակք պաշտօնէից Ազգային Պատրիարքարանիս: Փութամ գրութեամբս յայտ առնել Հօրդ Սրբոյ Հոգևորի, թէ դրամարկղն այն որբոց ըստ մեզ նուիրական է և անձեռնմխելի. և զի որ ինչ նուիրեալ է ցարդ վայր ժամանակի ի նպաստ որբոց ի կիր արկեալ է միշտ և միմիայն ի վճարումն ամսաթոշակաց սահմանելոց որբանոցաց, և ոչ մի դանգ վճարեալ է ցարդ ի պէտս այլոյ իրիք, և յայսմ հետէ ևս անհնար է ձեռնամուխ լինել յիրաւունս որբոց:

Զայս ճշգրիտ տեղեկութիւն հաղորդելով Վեհափառ Տեառնդ, խոնարհաբար առաջի առնեմ հերքել պաշտօնապէս զայն ստութիւն, որ ոչ միայն պղտորէ զմիտս մերայ-